

ՍԱՂՄՈՍ 80

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աղերս Աստծուն փրկելու Իր ժողովրդին իրենց արհավիրքներից	Աղոթք Իսրայելի վերականգնման համար	Ազգային թշնամիներից փրկության աղոթք	Աղոթք ազգի վերականգնման համար	Աղոթք Իսրայելի վերականգնման համար
<u>MT ներածություն</u>				
Գլխավոր երաժշտին, Ասափի սաղմոսը				
80:1-3	80:1-2 80:3	80:1-2 80:3	80:1-2 80:3	80:1-2 80:3
80:4-7	80:4-6 80:7	80:4-6 80:7	80:4-6 80:7	80:4-6 80:7
80:8-13	80:8-11 80:12-13	80:8-13	80:8-15	80:8-9 80:10-11 80:12-13
80:14-19	80:14-18 80:19	80:14-18 80:19	80:16-18 80:19	80:14-16 80:17-18 80:19

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ուշադրություն դարձրե՛ք Իսրայելի Աստծո համար օգտագործվող տարբեր անուններին և տիտղոսներին:

1. Իսրայելի Հովիվ, Սաղմ. 80:1 (տես՝ Սաղմ. 23:1-ի գրառումը)
2. Ո՛վ Աստված (*Elyhah*), Սաղմ. 80:3
3. ՏԵՐ (ՅԱՀՎԵ), Սաղմ. 80:4,19
4. Չորաց Աստված, Սաղմ. 80:4,7,14,19

Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Բ. Առկա է կրկնեղային մի արտահայտություն, որը ամփոփում է մի քանի պարբերություններ՝ Սաղմ. 80:1-3, 4-7, 14-19: Այն ունի երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և մեկ ԸՂՁԱԿԱՆ: Այն ողորմության, ներման և վերականգնման աղոթք է:

Գ. Հնարավոր է առկա է «Մեսիական» ակնարկ, որն առնչվում է՝

1. «ընձյուղին» (BDB 488), որը հնարավոր է աստվածաբանական կապ ունի «Ճյուղի» հետ (BDB 666, տես՝ Եսայի 4:2, 11:1, 53:2, Երեմ. 23:5) և «շավիղի» հետ (BDB 855, տես՝ Երեմ. 33:15, Չաք. 3:8, 6:12)
2. «Քո աջ կողմի մարդը»
3. «մարդու որդին, ում Քեզ համար ուժեղացրեցիր»
4. և անգամ հավանաբար «Իսրայելի Հովիվը», ով Դավթի սերնդից դուրս եկողի նշանակությամբ է

Մյուս տարբերակն այն է, որ բոլոր նկարագրությունները կապված են ազգային Իսրայելի կամ Հուդայի հետ:

Դ. Քանի որ այս Սաղմոսը և Սաղմոս 80:12-13 տեղ են գտել Ասափի սաղմոսներում և մատնանշում են Հուդայի վրա հարձակումը, հավանաբար տարեթիվը կլինի Ք. Ա. 586թ:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 80:1-3

¹Ականջ դիր, ո՛վ Իսրայելի Հովիվ,

Դո՛ւ, որ առաջնորդում ես Հովսեփին, ինչպես հոտ .

Դո՛ւ, որ բնակվում ես քերովբեների *միջև*, փայլիր:

²Եփրեմի և Բենիամինի և Մանասեի առջև արթնացրո՛ւ Քո զորությունը

Եվ արի՛, փրկի՛ր մեզ:

³Մեզ ե՛ս դարձրու, ո՛վ զորությունների Աստված,

Եվ Քո երեսը փայլեցրո՛ւ, և մենք կփրկվենք:

80:1-3 Այս պարբերությունը կազմված է մի շարք ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔՆԵՐԻՑ:

1. Ականջ դիր, Սաղմ. 80:1 – BDB 24, KB 27, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. փայլիր, Սաղմ. 80:1 – BDB 422, KB 424, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. արթնացրու, Սաղմ. 80:2 – BDB 734, KB 802, *Polel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. արի՛, փրկի՛ր, Սաղմ. 80:2 – BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. ետ դարձրում, Սաղմ. 80:3 – BDB 996, KB 1427, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. փայլեցրո՛ւ, Սաղմ. 80:3 – BDB 21, KB 24, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (հնարավոր է սա արտացոլում է ԹՎՈԳ 6:25-ի Ահարոնի օրհնությունը, նաև ուշադրություն դարձրե՛ք Սաղմ. 31:6-ի գրառմանը):
7. կփրկվենք, Սաղմ. 80:3 – BDB 446, KB 448, *Niphal* ԸՂՁԱԿԱՆ

80:1 «Իսրայելի Հովիվը» Այս արտահայտությունը մատնանշում է Աստծո ներկայությունը և սիրառատ հոգատարությունը (տես՝ Ծննդ. 49:24, Սաղմ. 23:1-3) ինչպես նաև կապում է Դավթի հետ, որը կանչված էր Աստծուց հոգալու ոչխարների համար: Սա ավելի հավանական է Մեսիական ակնարկ է կատարում Սաղմ. 80:15-17-ում (տես՝ Համատեքստային Հասկացություններ, Գ):

Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է բնութագրվում Աստված:

1. Որը հոտի պես առաջնորդեց Հովսեփին (Հովսեփը նաև նշվում է Սաղմ. 77:15, 78:67-ում)
2. Դու, որ բնակվում ես քերովքների միջև: Սա ակնարկ է Ելից 25:22-ի: ՅԱՀՎԵՆ խորհրդապատկերորեն բնակվում էր ուխտի տապանակի ողորմության աթոռի վրա՝ երկու *քերովքների* միջև (տես՝ 1 Թագ. 4:4, 2 Թագ. 6:2, Սաղմ. 99:1): Սա այն տեղն է, որտեղ հանդիպում են երկինքն ու երկիրը՝ ողորմության և հայտնության վայրում:

«*Քերովքե*» բառի համար տես՝ Հատուկ Թեմա . Քերովքե:

❖ «**Վիայի՛ր**» Իսրայելի երկրավոր, առօրյա գործերի մեջ Աստծո ներգրավվածության այս շեշտադրությունը նկարագրվում է որպես տապանակի վրայից եկող լույս: Նկատե՛ք այս Սաղմոսում կրկներգը (տես՝ Սաղմ. 80:3,7, 19) ունի մեկ այլ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԲԱՅ (BDB 21, KB 24), որը մատնանշում է լույս: ՀՄԱ-ում լույսը հայտնության, առողջության, բարության խորհրդապատկերն էր: ՀԿ-ում այն հաճախ առնչվում է աստվածության պայծառության հետ (Աստծո ֆիզիկական երևույթի): Ուշադրություն դարձրե՛ք Սաղմ. 50:2, 94:1-ին, ինչպես նաև փառքի *Շեխինա* ամպին ելիցի և անապատում դեգերելու շրջանում (այսինքն՝ Ելից 13:21-22, 33:9):

Աստված լույս է – Սաղմ. 27:1, Եսայի 60:20, Միք. 7:8, Հակոբոս 1:17, 1 Հովի. 1:5

Հիսուսը լույս է – Եսայի 9:2, Հովհաննես 1:4, 8:12, 12:35, 46

Հավատացյալները լույս են – Սաղթ. 5:14-16, Հովի. 8:12բ

80:2 Հարց է առաջանում, թե ինչու են նշվում միայն այս ցեղերը: Թվոց 2:18-24-ից գիտենք, որ նրանք միասին ճամբարում էին խորանի արևմտյան մասում, երբ ճամփորդում էին անապատի միջով:

Եփրեմն ու Մանասեն Յովսեփի որդիներն էին: Հովսեփն ու Բենիամինը Հակոբի սիրելի կնոջ՝ Ռաբելի զավակներն էին:

Հովսեփի որդիները ամբողջությամբ որդեգրվեցին Հակոբի կողմից (այսինքն՝ տասներեք ցեղ) և դարձան ամենամեծ ցեղը միացյալ միապետությունը (այսինքն՝ Սավուդ, Դավիթ և Սողոմոն) Ք. Ա. 922թ-ին բաժանվեց: Նրանք դարձան հյուսիսային դաշնության առաջնորդները՝ հայտնի որպես Իսրայել, Սամարիա կամ Եփրեմ: Առաջին առաջնորդը՝ թագավորը Եփրեմի ցեղից աշխատանքի ղեկավար առաջնորդ էր՝ Հերոբոամ I:

Բենիամինը դարձավ Հուդայի հարավային դաշնության մի մասը Ղևտացիների մեծամասնության հետ միասին: Ծնավոնը նախկինում համագործակցում էր Հուդայի հետ, ուստիև հնարավոր է դա ամբողջ ուխտի ժողովրդին նկատի ունենալու կերպ էր:

80:3 Այս կրկներգը (տես՝ Սաղմ. 80:7,19) ցույց է տալիս, որ այս Սաղմոսը գրվել է ազգային դժվարության ընթացքում: Եթե Ասափի Սաղմոս 77-80 բխել են միևնույն պատմական շրջանից, ապա հավանական է, որ սա առնչվում է Նաբուգոդոնոսորի գլխավորությամբ Բաբելոնի հարձակմանը Հուդայի վրա: Նա հարձակվել է մի քանի անգամ (այսինքն՝ Ք. Ա. 605, 597, 586, 582թթ), սակայն հնարավոր է այս Սաղմոսը դիտարկել որպես Իսրայելի Ք. Ա. 722թ-ի անկման պատմական միջավայր, երբ Սամարիան ընկավ Ասորեստանի կողմից երեք տարի պաշարումից հետո: Հրեական Մերտողության Աստվածաշունչը (էջ՝ 1372) առաջարկում է, որ այն ի սկզբանե գրվել է Սամարիայի անկման համար, սակայն վերանայվել է նկատի առնելով Երուսաղեմի անկումը՝ Սաղմոս 79-ի հետ համեմատած իր մոտիկության և արտահայտությունների նմանության պատճառով, որը ըստ երևույթին եղել է Ք. Ա. 586թ-ին:

Քանի որ Սաղմ. 80:14 կիրառում է միևնույն ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԲԱՅ (BDB 996, KB 1427), որոշ գիտնականներ այն դիտարկում են որպես հավելյալ կրկներգ, հետևաբար յուրաքանչյուր պարբերությունը ավարտվում է այդ խոսքերով: Սակայն, Սաղմոս 80:14 նույնը չէ, անգամ միևնույն ԲԱՅԸ *Qal* է և ոչ թե *Hiphil*:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 80:4-, 7

⁴Ո՛վ ՏԵՐ, գորաց Աստված, մինչև ե՛րբ ես բարկանալու Քո ժողովրդի աղոթքի վրա:

⁵Արտասուքի հաց ես կերցնում նրանց

Ու մեծ չափով արտասուք ես խմեցնում նրանց:

⁶Մեզ կռվի առարկա ես դարձնում մեր հարևանների առաջ

Ու մեր թշնամիները ծիծաղում են մեզ վրա:

⁷Կրկին դեպի մե՛զ դարձիր, ո՛վ գորաց Աստված,

Եվ Քո երեսը փայլեցրո՛ւ, ու կփրկվենք:

80:4-7 Այս պարբերությունը Աստծուն ուղղված աղաչանք է միջամտելու Իր ժողովրդի համար:

1. Մինչև ե՛րբ ես բարկանալու – Աստծո գործողության կամ միջամտության համար պարբերաբար կրկնվող հարց է (տես՝ Սաղմ. 74:10, 90:13, 94:3, Առակ. 1:22):
2. Արտասուքի հաց ես կերցնում նրանց (հզոր նկարագրություն է, տես՝ Սաղմ. 42:3, 102:9)
3. Մեծ չափով արտասուք ես խմեցնում նրանց (բառացի՝ «երրորդ մաս», BDB 1026 I, միայն այստեղ և Եսայի 40:12-ում)
4. Մեզ կռվի առարկա ես դարձնում մեր հարևանների առաջ (տես՝ Սաղմ. 44:13, 79:4, Եզեկ. 5:14, 22:4, Դան. 9:16):
5. մեր թշնամիները ծիծաղում են մեզ վրա: TEV և NJB հետևում են LXX-ին՝ «մեր թշնամիները ծաղրում են մեզ»:

Իսրայելի, Հուդայի ուխտի անհնազանդության և կռապաշտության այս հետևանքները ճիշտ հակառակն են այն բանի, ինչ Աստված ուզում էր նրանցից, որ անեին ՀՄԱ-ում հեթանոսների մեջ Աստծո համար: Նրանցից սպասվում էր, որ լինեին լույս (տես՝ Եզեկ. 36:22-23), սակայն դարձան ծաղրուծանակ (տես՝ Սաղմ. 79:10, 115:2):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 80:8-13

⁸Եգիպտոսից մի որթատունկ դուրս բերեցիր,

Հեթանոսներին վռնդեցիր ու այն տնկեցիր:

⁹Նրա համար տեղ պատրաստեցիր,

Նրա արմատները խորացրիր, և այն լցրեց երկիրը:

¹⁰Բլուրները ծածկվեցին նրա ստվերով,

Ու նրա ճյուղերն Աստծո մայրիներին նմանվեցին:

¹¹Իր ոստերը մինչև ծովը ձգեց ու իր ճյուղերը՝ մինչև Գետը:

¹²Ինչո՞ւ փլեցիր նրա ցանկապատները,

Որ ճանապարհից բոլոր անցնողները պոկոտեն այն:

¹³Անտառի վարազը ապականեց այն,

Ու դաշտի վայրի գազանները խժռեցին այն:

80:8-13 Այս պարբերությունը կիրառում է խաղողի այգին որպես ուխտի ժողովրդի համար փոխաբերություն:

1. ՅԱՀՎԵՆ Եգիպտոսից հանեց նրանց (ինչպես Նա խոստացել էր Ծննդ. 15:12-21-ում)
2. ՅԱՀՎԵՆ պարտության մատնեց Քանանի ցեղերին (այսինքն՝ Հեսու նվաճումը)
3. ՅԱՀՎԵՆ տնկեց նրանց Խոստացյալ Երկրի բերրի հողում

Անգամ բոլոր այս երկնային օրհնություններով հանդերձ, նրանք անհավատարիմ էին (տես՝ Նեեմիա 9, Սաղմոս 78): Ուստի Դևտացիների 26 և 2 Օրինաց 27-30 անեծքները սկսեցին գործել:

1. Նրա պաշտպանությունը (այսինքն՝ խաղողի այգու պարիսպները) հեռացվեց
2. Նա թույլ տվեց զավթիչներին գրավելու Քանանը (Սաղմ. 80:12-13): Ինչպես որ իսրայելացիներն էին դուրս քշել քանանացիներին (այսինքն՝ Ծննդ. 15:12-21), այժմ էլ ուխտի մեջ գտնվող մեղավոր ժողովրդին էին քշում:

80:8 «որթատունկ» Սա կարող էր վերաբերել ամբողջ ուխտի ժողովրդին (տես՝ Եսայի 5, Ովսեա 10:1) կամ լինել հատուկ անդրադարձ հյուսիսային թագավորությանը (տես՝ Ծննդ. 49:22):

80:11 «ծով. . . Գետը» Սա վերաբերում է Միջերկրական ծովին արևմուտքից և Եփրատ գետի ջրերի ակունքին հյուսիս-արևելքից (տես՝ Ելից 23:31):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 80:14-19

¹⁴Ո՛վ գորությունների Աստված, աղաչո՛ւմ եմք, դարձի՛ր,
Նայի՛ր երկնքից ու տե՛ս, այցելի՛ր այս որթատունկին,
¹⁵Եվ խաղողի այգուն, որ Քո աջ ձեռքով տնկեցիր ու ճյուղին,
Որ Քեզ համար զորացրիր:
¹⁶Այն կրակով է այրվել, կտրվել է.
Քո երեսի սաստելուց կորչում են:
¹⁷Թող Քո ձեռքը Քո աջ ձեռքի մարդու վրա լինի,
Մարդու որդու վրա, *մմ* Քեզ համար ուժեղացրիր:
¹⁸Մենք այլևս չենք հեռանա Քեզնից.
Կենդանացրո՛ւ մեզ, ու մենք Քո անունը կկանչենք:
¹⁹Նորից դեպի մե՛զ դարձիր, ո՛վ Տեր, զորաց Աստված,
Եվ Քո երեսը փայլեցրո՛ւ, ու կփրկվենք:

80:14-19 Այս պարբերությունը ամփոփիչ աղոթք է (3 *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔ Սաղմ. 80:14-ում) ՅԱՀՎԵԻՆ, որպեսզի ողորմի Աբրահամի սերունդներին:

Մեկնության իրական հարցն այն է, թե ինչպես էին նրանք ակնկալում, որ դա տեղի կունենար:

1. վերականգնել որպես հզոր ազգ (այսինքն՝ ընձյուղը /BDB 488, ՀԿ-ում միայն այստեղ է/ կամ Սաղմ. 80:8, 14-ի որթատունկը):
2. ուղարկել հատուկ Դավթի սերմը՝ ժառանգը (Սաղմ. 80:15,17)
ա. որդին, որին դու ուժեղացրիր կամ ապահովեցիր (BDB 54)
բ. Քո ձեռքը լինի Քո աջ կողմի մարդու վրա, մարդու որդու, որին Դու ուժեղացրեցիր (BDB 54, զուգահեռ է Սաղմ. 80:15) Քո համար (տես՝ Սաղմ. 110:1):

Ակնհայտ է, որ այս նկարագրությունը կարող է վերաբերել՝

1. ազգային Իսրայելին, Հուդային
2. Դավթի սերնդից թագավորին՝ Մեսիային (տես՝ 2 Թագավորաց 7 և Արամերեն Թարգումը)

80:16 Ուշադրություն դարձրե՛ք Իսրայել, Հուդա դժվարությունները հանդիսանում են Աստծո գործողությունների ուղղակի արդյունքը և ոչ թե զավթիչների զորության: Աստված գործածեց հեթանոս ազգերին, որպեսզի դատի Իր ժողովրդին (տես՝ Ամբակում): Սա զարհուրելի էր հրեա ազգի համար: Նա կռվել էր նրանց կողքին (տես՝ Սաղմ. 76:6), սակայն այժմ Նա զավթիչների կողքին էր (այսինքն՝ «սուրբ պատերազմի» հակադարձ տեսարանը):

80:17 «Քո ձեռքը» Տես՝ Հատուկ Թեմա. Չեռք:

❖ «մարդու որդին» Այս արտահայտությունը պարբերաբար կրկնվում է Եզեկիելում: Տես ստորև տրված իմ մեկնաբանության գրառումները Եզեկիել 2:1-ից:

Եզեկ. 2:1 «մարդու որդին» Սա բառացիորեն «*բեն-Ադամ*» (BDB 119 ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ, BDB 9): Սա հաճախ է կիրառվում Եզեկիելի գրքում որպես միջոց նկատի ունենալով Եզեկիելին որպես մարդկային էակ (93 անգամ, տես՝ Սաղմ. 8:4): Եզեկիելում սա մի կերպ է, որով Աստված դիմում է Եզեկիելին: Այս նույն արտահայտությունը կարելի է գտնել Հորի գրքում և Սաղմունքում: Դան .7:13-ում այս տերմինը ստանձնում է աստվածային առանձնահատկություն, որպես թե մեկը նման էր «մարդու որդուն»՝ եկած Հինավուրց Օրերից առաջ (այսինքն՝ աստվածությունը) հեծած

երկնքի ամպերի վրա: Դանիել 7:13 Հիսուսի համար հիմք էր կիրառելու այս տերմինը հենց Իր համար, որը միավորում է Իր մարդեղությունն ու աստվածությունը (այսինքն՝ 1 Հովի. 4:1-3): Այս տերմինը չունի ազգայնական կամ ռազմական, ռաբբիական հնչերանգներ:

80:18 Այս համարը թվարկում է մի քանի խոստում ասված սաղմոսերգուի կողմից, սակայն ուխտի ժողովրդի համար:

1. այլևս (այսինքն՝ երբ Աստված կրկին դառնում է դեպի նրանց, տես՝ Սաղմ. 80:14) չենք հեռանա Քեզնից (այսինքն՝ չեն ուրանա, BDB 690, KB 744, *Qal* ԱՆԿԱՏԱՐ)
2. կենդանացրու մեզ՝ ապրեցրու (BDB 310, KB 309, *Piel* ԱՆԿԱՏԱՐ)
3. եթե Աստված գործում է նրանց համար, նրանք կկանչեն (BDB 894, KB 1128, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) Նրա անունը տանարում

Ուշադրություն դարձրե՛ք ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻ այս կիրառությունը, որը մատնանշում է շարունակվող գործողություն:

80:19 Տես Սաղմ. 80:3-ի գրառումը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք այս Սաղմոսը վերաբերում է գրոհի՝ հարձակման: Եթե այդպես է, ո՞ր պատմական իրադարձությունն է լավագույնս համապատասխանում:
2. Այս Սաղմոսում գրված է Իսրայելի, թե՛ Հուդայի մասին:
3. Թվարկե՛ք և բացատրե՛ք «լույսին» վերաբերող տարբեր ակնարկները և տերմինները:
4. Ինչո՞ւ է Սաղմ. 80:3,7,19-ի կրկներգն ամեն անգամ Աստծո անունը ավելացնում:
5. Ինչո՞ւ են հաճախ ազգերը նկատի առնվում բուսական փոխաբերությամբ:
6. Արդյո՞ք գոյություն ունեն «Մեսիական» ակնարկներ այս Սաղմոսում կամ արդյո՞ք դրանք բոլորն էլ վերաբերում են ազգին որպես մի ամբողջություն: